


Հաստատված է՝

<<Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան>>

հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի

2020թ. փետրվարի 21 թիվ/Միստի 30-Ղ որոշմամբ

ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

 Դ. Տեր-Ստեփանյան

**<<ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են <<Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամի (այսուհետ` Հիմնադրամ) գույքի տնօրինման՝ օգտագործման, հաշվառման, վարձակալության հանձնման, ինչպես նաև լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման, լուծարման և օտարման հետ կապված հարաբերությունները:

**II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

Հաստատված է՝

<<Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան>>

հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի

2020թ. փետրվարի -ի թիվ 1 նիստի որոշմամբ

ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

\_\_\_\_\_ Դ. Տեր-Ստեփանյան

**<<ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են <<Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) գույքի տնօրինման՝ օգտագործման, հաշվառման, վարձակալության հանձնման, ինչպես նաև լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման, լուծարման և օտարման հետ կապված հարաբերությունները:

**II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ որպես Հիմնադիր, Հիմնադրամին հանձնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 19-ի թիվ 615 որոշման N 3 հավելվածում նշված գույքը (այսուհետ՝ հանձնված գույք), որը հիմնադրամը տիրապետում է անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով:

3. Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

4. Հիմնադրամը պարտավոր է իրեն հանձնված գույքը պահպանել պատշաճ վիճակում և կրել դրա պահպանման հետ կապված ծախսերը իր սեփական միջոցների հաշվին:

5. Հիմնադրամն իրավունք ունի իրեն հանձնված գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ վարձակալության, որի ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարին՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքի: Հանձնված գույքի վարձակալության հանձնման արդյունքում ստացված եկամուտները պետական սեփականություն են:

6. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Հիմնադրամի պարտավորությունների համար, իսկ Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադրամը իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով:

### **III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՈՒՄ**

5. Հիմնադրամին պատկանող է համարվում Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրությամբ սահմանված կարգով իր կողմից ձեռք բերված գույքը և Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով հանձնված գույքը (այսուհետ՝ սեփական գույք):

6. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներն են՝

1) հիմնադրի ներդրումը.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական

անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

3) դրամական մուտքերը պետական բյուջեից.

4) դրամաշնորհները.

5) հիմնադրամի և իր կամ իր մասնակցությամբ ստեղծած տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

6) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում).

7) օրենքով չարգելված այլ միջոցներ:

7. Հիմնադրամն իր հայեցողությամբ տնօրինում, տիրապետում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

8. Հիմնադրամի գույքը հաշվառվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Հիմնադրամի կողմից հաշվառված գույքը հանձնվում է նյութական պատասխանատու անձանց պահեստավորման և պահպանման համար:

9. Հիմնադրամի գույքը տրամադրվում է աշխատակիցներին իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելու, իսկ ուսանողներին՝ ուսումնագիտական գործունեության համար:

10. Իր կանոնադրական նպատակների իրականացման նպատակով Հիմնադրամն իրավունք ունի իր սեփական գույքը, իբրև սեփականություն, օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, այն գրավադրել, տալ վարձակալության, անհատույց օգտագործման կամ տնօրինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ եղանակով:

11. Հիմնադրամը գույքի տնօրինման՝ այդ թվում օտարման, գրավադրման և անհատույց օգտագործման հետ կապված գործարքները կատարում է ինքնուրույն, բացառությամբ Հիմնադրամի կանոնադրության 17-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված, ինչպես նաև 42-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված 20 (քսան) միլիոն դրամի կամ դրան համարժեք այլ արտարժույթի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատման դեպքերի:

12. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ հիմնադրամի

հիմնադիրները, հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև հիմնադրամի աշխատողները կանոնադրությամբ նախատեսված շահառուներ են:

13. Հիմնադրամի գույքը կարող է օտարվել հետևյալ եղանակներով՝

1. Հրապարակային սակարկություններով՝ (մրցույթ կամ աճուրդ, այդ թվում նաև էլեկտրոնային),

2. Ուղղակի վաճառքով

10 մլն ՀՀ դրամին համարժեք կամ գերազանցող հաշվեկշռային արժեք ունեցող գույքի օտարման ձևը և պայմանագիրը հաստատվում են Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից:

14. Հիմնադրամի գույքի օտարումը պետք է լինի հիմնավորված, ապահովի Հիմնադրամի կանոնադրային խնդիրների արդունավետ լուծում և չպետք է խաթարի Հիմնադրամի բնականոն գործունեությունը:

15. Հիմնադրամի սեփականությունը համարվող գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել մրցույթով:

16. Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է օրենքով և ներքին իրավական ակտով սահմանված կարգով:

17. Վարձակալի հետ կնքվում է վարձակալության պայմանագիր, որի վրա տարածվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները:

#### IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ

18. Գույքը համարվում է լրիվ մաշված, եթե՝

ա) այն հետագա օգտագործման կամ շահագործման համար ոչ պիտանի կամ ոչ նպատակահարմար է դարձել դրա լրիվ ֆիզիկական մաշվածության, վթարների, տարերային աղետների, շահագործման նորմալ պայմանների խախտման հետևանքով և նմանատիպ այլ պատճառներով,

բ) այն պիտանի չէ Հիմնադրամի ընդլայնման, վերակառուցման և տեխնիկական վերազինման նպատակով օգտագործելու համար,

գ) դրա հետագա օգտագործումը, իրացումը կամ այլ օտարումը անհնար է կամ տնտեսապես աննպատակահարմար:

19. Գույքը ենթակա է լուծարման (քանդում, ապամոնտաժում, խոտանում), եթե սույն կարգի 18-րդ կետի համաձայն դրա իրացումը կամ այլ ձևով օտարումն անհնարին է կամ տնտեսապես աննպատակահարմար և եթե այն պարունակում է այնպիսի նյութեր, որոնք պիտանի են օգտագործման համար և անհրաժեշտ՝ Հիմնադրամի հետագա գործունեության համար:

20. 18-րդ կետով սահմանված լրիվ մաշված գույքի լուծարումից առաջացած օգտագործման համար պիտանի նյութերը, դետալները, առանձին մասերը, թանկարժեք քարերը և թանկարժեք մետաղները մուտաքագրվում են Հիմնադրամի պահեստ՝ որպես առանձին գույքային միավորներ: Լուծարումից առաջացած օգտագործման համար ոչ պիտանի դետալները և նյութերը հաշվառվում են որպես ջարդոն:

21. Լրիվ մաշված գույքի լուծարման, դուրսգրման և օտարման նպատակով Հիմնադրամի ռեկտորի հրամանով ստեղծվում է հանձնաժողով (այսուհետև՝ Հանձնաժողով), որի կազմում ընդգրկվում են լրիվ մաշված տվյալ գույքի համար պատասխանատվություն կրող անձինք, համապատասխան կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ներկայացուցիչները: Անհրաժեշտության դեպքում Հիմնադրամի ռեկտորը հանձնաժողովի աշխատանքներում պայմանագրային հիմունքերով կարող է ընդգրկել համապատասխան այլ մասնագետների կամ անկախ գնահատողների:

22. Հանձնաժողովը՝

ա) անցկացնում է լուծարման կամ դուրսգրման ենթակա լրիվ մաշված գույքի գնում և կազմում է եզրակացություն՝ նշելով լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման հիմքերը (մաշվածություն, վերակառուցում, օգտագործման կամ շահագործման նորմալ պայմանների խախտում, վթար և այլն):

բ) հիմնավորում է լուծարման կամ դուրսգրման ենթակա լրիվ մաշված գույքի օգտակար ծառայության սպառված լինելու փաստը,

գ) որոշում է լուծարված լրիվ մաշված գույքի առանձին հանգույցների, դետալների, նյութերի հետագա օգտագործման հնարավորությունն ու նպատակահարմարությունը, կատարում է դրանց գնահատում:

դ) վերահսկում է լուծարման ենթակա լրիվ մաշված գույքից պիտանի հանգույցների, դետալների, նյութերի առանձնացումը, որոշում է դրանց քանակը, կշիռը, դրանց հետագա պահեստավորումը:

ե) միջոցներ է ձեռնարկում լրիվ մաշված գույքի ժամկետից շուտ շահագործումից դուրս գալու համար մեղավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ, առաջարկ է ներկայացնում Հիմնադրամի ռեկտորին՝ մեղավոր անձանց օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

զ) կազմում է լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման ակտ՝ համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2000 թվականի հունիսի 12-ի «Հիմնական միջոցների և տեղակայման ենթակա սարքավորումների սկզբնական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները հաստատելու մասին» N 104ա հրամանով հաստատված «Հիմնական միջոցների դուրսգրման ակտ» ՀՄ-8 ձևի, որը ստորագրվում է Հանձնաժողովի անդամների կողմից և հաստատվում է Հիմնադրամի ռեկտորի ստորագրությամբ և կնիքով:

23) Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման ակտում նշվում են՝

ա) գույքի արտադրման կամ կառուցման ամսաթիվը,

բ) գույքի ձեռքբերման, այն օգտագործելու կամ շահագործման հանձնելու ամսաթիվը,

գ) գույքի սկզբնական արժեքը (վերականգնված) արժեքը, վերագնահատման ամսաթիվը, արժեքը),

դ) հաշվապահական հաշվառման նպատակով հաշվարկված մաշվածության գումարը (վերականգնված) արժեքը, վերագնահատման ամսաթիվը, արժեքը),

ե) գույքի լուծարման կամ դուրսգրման հիմքերը,

զ) գույքի հիմնական մասերի, դետալների, հանգույցների, կառուցվածքային տարրերի վիճակը:

24. Հիմնադրամն իր հաշվապահական հաշվեկշռից լրիվ մաշված գույքը կարող է դուրս գրել միայն ամորտիզացիայի ժամկետը լրանալու դեպքում՝ բացառությամբ այն գույքի, որը շահագործման համար ոչ պիտանի է դարձել վթարի, բնական աղետի, ֆորսմաժորային իրավիճակների հետևանքով: Մնացած դեպքերում դրանք դուրս են գրվում Հոգաբարձուների խորհրդի թույլտվության առկայության դեպքում:

25. Վթարի հետևանքով Հիմնադրամի հաշվեկշռից գույքի լուծարման կամ դուրսգրման դեպքում ակտին կցվում է վթարի մասին ակտի պատճենը:

26. Դուրսգրման ենթակա լրիվ մաշված գույքը անկախ գնահատողի կողմից գնահատվում է այդ պահի շուկայական արժեքով, որի վերաբերյալ կազմվում է հաշվետվություն:

27. Գույքի գնահատման հաշվետվությունը պետք է պարունակի՝

ա) գնահատման գործընթացի նկարագրությունը,

բ) գույքի նկարագիրը,

գ) գնահատման մեթոդաբանությունը,

գույքի ցանկը,

դ) յուրաքանչյուր գույքային միավորի՝ այդ պահի շուկայական արժեքը, իսկ արժեք չունենալու դեպքում արժեքը նշվում է 0 (զրո),

ե) տեղեկատվության աղբյուրները,

զ) պատասխանատվությունը,

է) գույքի լուսանկարները,

ը) անկախ գնահատողի որակավորման վկայականը:

28. Հաշվետվությունը Հիմնադրամի կողմից ընդունվելուց հետո ենթակա է պարտադիր հրապարակման Հիմնադրամի պաշտոնական կայքում: Հաշվետվությամբ սահմանված գույքի շուկայական արժեքները գործում են սահմանվելուց հետո 12 (տասներկու) ամսվա ընթացքում: Տասներկուամսյա ժամկետից հետո մնացորդային գույքը ենթակա է նորից վերագնահատման:

29. Դուրսգրման ենթակա այն գույքը, որի համար շուկայական արժեք չի սահմանվել կամ դրա արժեքը 0 (զրո) է Հանձնողովի կողմից կազմված ակտի հիման վրա դուրս է բերվում Հիմնադրամի տարածքից: Այդ նպատակով համապատասխան ծառայությունը կազմակերպողի հետ կնքվում է պայմանագիր:

30. Դուրսգրման ենթակա այն գույքը, որի համար շուկայական արժեք է սահմանվել, ենթակա է Հիմնադրամի կողմից օտարման, իսկ եկամուտը՝ մուտքագրման Հիմնադրամի բանկային հաշվեհամարին: Մուտքագրված միջոցները տնօրինվում են Հիմնադրամի կողմից:

31. Մինչև լուծարման կամ դուրսգրման ակտի հաստատումը դուրս գրվող լրիվ մաշված գույքի քանդում և ապատեղակայում չի թույլատրվում:

32. Հիմնադրամի ավտոտրանսպորտային միջոցների լուծարման կամ դուրսգրման ժամանակ բացի սույն կարգի 23-րդ կետում նշված տարրերից՝ նշվում են նաև



ավտոմեքենայի վազքը, անհրաժեշտության դեպքում՝ տեխնիկական այլ տվյալներ: Ավտոտրանսպորտային միջոցների վթարի հետևանքով Հիմնադրամի հաշվեկշռից դրա լուծարման կամ դուրսգրման ակտին կցվում է նաև վթարի կամ այլ պատահարի մասին կազմված արձանագրության օրինակը, մինչև վթարի պահը ավտոտրանսպորտային միջոցի վազքի մասին տեղեկանքը, անհրաժեշտության դեպքում՝ տեխնիկական այլ տվյալներ:

33. Նախկինում առևանգված և դեռևս չհայտնաբերված հիմնական միջոցների դուրսգրման ժամանակ (որի վերաբերյալ կա հարուցված քրեական գործ) լրացուցիչ պահանջվում է քրեական գործը կարճելու վերաբերյալ համապատասխան որոշում:

35. Լուծարված կամ դուրսգրված գույքի կամ նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի ոչնչացումը կամ վաճառքը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## V. ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

36. Հիմնադրամի սեփականություն համարվող գույքի վարձակալությունից, օտարումից, լուծարումից կամ դուրս գրումից ստացված միջոցները Հիմնադրամի սեփականությունն են և տնօրինվում են Հիմնադրամի կողմից:

37. Լրիվ մաշված գույքի առանձի տեսակների համար կարող է սահմանվել լրիվ մաշված գույքի դուրսգրման այլ կարգ՝ հաշվի առնելով Հիմնադրամի կողմից ներկայցված առաջարկություններն ու հիմնավորումները:

38. Սույն կարգը ուժի մեջ է մտնում Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

39. Սույն կարգով չսահմանված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: